

Առաջադրանք 2. Քանակական անալիզ

Անհրաժեշտ է որոշել նատրիումի օրթոֆոսֆատի բյուրեղահիդրատի բանաձևը.

Նյութեր և սարքավորումներ

Տիգել՝ 1 հատ

նրբունելի (պինցետ)՝ 1 հատ,

նատրիումի օրթոֆոսֆատի բյուրեղահիդրատ էպինդորֆի անոթում՝ 1 հատ,

կշեռք՝ ընդհանուր օգտագործման համար,

էլեկտրական սալիկ՝ ընդհանուր օգտագործման համար,

ժամացուց տեսադաշտում:

Փորձի ընթացք

Կշռել տիգելը, այնուհետև տիգելի մեջ ավելացնել մոտ 2. 5-3գ բյուրեղահիդրատ և նորից կշռել:

Բյուրեղահիդրատով տիգելը դնել տաք էլեկտրական սալիկի վրա և չորացնել 15 րոպե: Այնուհետև

հանել էլեկտրական սալիկի վրայից նրբունելիի օգնությամբ, դնել մետաղյա սալիկի վրա և թողնել

10 րոպե որպեսզի սառչի: Կշռել և գրանցել զանգվածը

Պարզ բերել բյուրեղահիդրատի բանաձևը

գրանցել բոլոր ստացված տվյալները

Գրել ռեակցիայի հավասարումը

Իրականացնել հաշվարկները բանաձևը դուրս բերելու համար

Պատասխան: Բյուրեղահիդրատի բանաձևն է՝